

1393


ԵԿԱՆ ԶԲՐՍԱՐԱՆ

Կ Ա Մ

ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՔ 1890 ՏԱՐԻՈՅ

ՀԱՆԴԵՐՁ ԶՈՒՍՐՃԱԼԻ

ՎԻՃԱԿԱՅՈՅՅՈՎ



Գրեց Յ



Նաիր Գալթայեան Որբանոցին
յատկացեալ է :


—

Կ . ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ . ՆՇԱՆ Կ . ՊԷՐՊԷՐԵԱՆ

—

1889




ԸՆՏԱՆԵԿԱՆ ԶԲՕՍԱՐԱՆ

Կ Ա Մ

ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԲ 1890 ՏԱՐԻՈՅ

ՀԱՆԴԵՐՁ ԶՈՒԱՐՃԱԼԻ

ՎԻՃԱԿԱՅՈՅՅՈՎ



Շահը Գալֆայեան Որբանոցին
յատկացեալ է :


—


Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

—


1889





ԸՆՏԱՆԵԿԱՆ ԶԲՐՍԱՐԱՆ

1890 ՏԱՐԻՈՅ



Յ Ո Ի Ն Ո Ի Ա Ր

1—8 ՅՈՒՆՈՒՄ

Օգերը սաստիկ ցուրտ ըլլալուն պաղ առնելէ զգուշանալու է, քանզի քսակները պարարտ չեն : Կարգ մը մարդիկ փողոցներու մէջ մէկ պատէն միւսին կը զարնուին : Կին մը հաստատ միտքը դըրած է էրիկը գինովութեանը համար տունէն ներս չառնել . էրիկն ալ համոզելու համար կինը որ դուռը բանայ, քա՛ կնիկ, կըսէ, ասօր յետը լախիին օրն է չիյտէ՞ս :

Ազգականք և բարեկամք իրարու նոր տարի կը բարեմաղթեն :

9—17 Յուևուար

Յուևրտը կը շարունակէ, անձրև կը տեղայ :

Տան տիկին մը սօսաբէի հրաւիրուած ըլլալուն՝ էրկանը թաւշեայ վիզիթ մը և թաւշեայ գլխարկ մը կ'ապսպրէ . էրիկն ալ դրամական նեղութիւն ունենալուն՝ զանոնք գնելու անկարող ըլլալը կը յայտնէ . ասոր վրայ տիկինը տանը կաթսան և աւելորդ կարծած պղնձեղէն անօթներն ի վաճառ կը հանէ և անոնց ստակովը պէտքը կը հողայ *սիստապիսար* :

—

18—21 Յուևուար

Յուևրտը կը սաստկանայ, ձեան հատիկներն կսկսին իջնել երկրիս վրայ խաղալով :


Ածխավաճառներն իրարու աչքի լոյս կը մաղթեն : Ծովու վրայ քանի մը նաւաբեկութիւններ տեղի կունենան առանց մարդու կորստեան :

22—31 Յուևուար

Բնութեան ճերմակ սաւանովն ծածկուած են լեռները և դաշտերը, քաղքին մէջ փողոցները և տուներու կըղմինտրները, այլ սակայն ցուրտը բաւական մեղմացաւ,

Ձկանց առատութիւն:

Երեսփոխանին մէկը ատենաբանութեան մէջ ձեռքն անանկ ուժով բեմին կը զարնէ որ ունկնդիրներն իրենց քունէն սարսափահար կ'արթնան:



Փ Ե Տ Ր Ո Ի Ա Ր

—

1—8 Փետրուար

Արեւը՝ որուն երեսը ժամանակէ մը ի վեր չէինք տեսած, սկսաւ արձակել իւր ճառագայթները:

Երկրաչարժի թեթև ցնցում մը զգալի կ'ըլլայ հեռաւոր քաղքի մը մէջ:

Հողագործը ուրախ է, ածխավա-

ճառք իրենց յուսացածին չափ ցարդ
չահաւոր առուտուր չկրնալ ընելնուն
տրտում են :

—

8—15 Փետրուար

Անձրեւ և հողմ :

Ալեկոծութիւն :

Վաճառական մը ապառիկ դնելէ ա-
ւելի ապառիկ վաճառելուն կը հարկա-
դրի դրամարկը մէջը պարել ուզող
մկանց տրամադրութեան ներքեւ դնել :

—

15—22 Փետրուար

Անձրեւը տեղալէ չի դադրեցաւ :

Երկնքին պորտը պատուած ըլլալու է,
կըսէ պառաւ կին մը էրկանը :

Վաթսուն տարու կին մը կարգուիլ
փափագող 18-20 տարեկան երիտա-
սարդի մը 1500 ռակի քրաֆումա կը խոս-
տանայ :

22—29 ՓԵՏՐՈՒԱՐ

Անձրե , շարունակ անձրեւ :

Բագոսի տաճարները ջերմեռանդ
ուխտաւորներով լի են . նորա երկրպա-
գուք փոլոցը քալած ատեննին ալ կեր-
կըրպագեն :

Ի՞նչ իրարանցում է այդ . . . :

Բան մը չէ :

Մենծ աղայէ մը հաշիւ կուզեն չի-
տար , չիտալուն համար կը վռնտեն՝
չերթար . կ'սպառնան՝ մտիկ չընէր . կը
բողոքեն՝ կարեւորութիւն չիտար . կո-
րոշեն ծեծով դուրս ընել , և կը յաջո-
ղին :

Ահա ճշմարիտ աղգասիրութիւն :

Կնկան մէկը պատուհանէն մարտ կը
նեատէ , սափորը մէկու մը գլուխը ծա-
կելով ուղեղը կը պարպէ . կինը կ'ողբայ
նահատակ ամուսնոյն վրայ և կ'անիծէ
այդ արկածալից սովորութիւնը :



1—9 Մարտ

Տուրար մեղմացաւ . բայց վստահելու չէ գեղեցիկ փայլող արեւին , որ իր ջերմութիւնը կը տարածէ ամենուրեք :

Փորձառու կին մը կ'ըսէ . « Աղջիկներ'ր , ինչո՞ւ բալթօցիդ հաներ էք , հիւանդանա՞լ կ'ուզէք , փռնգտացիք մարտը հանեցի՞ք :

Մարդ մը կեանքը կ'ապահովագրէ , կինն իմանալով այս բանը էրիկը ծովը կը նետէ :



9—16 Մարտ

Հողմունք սկսան հալածել երկնից կապոյտը ծածկող ամպերը :

Այս ի՞նչ է . . . մէկէն ի մէկ ձիւներն ի՞նչ կը նշանակէ . այս հարցման պատասխանելը դիւրին է . խենդը իր խենդութիւնը պիտի ընէ , ի՞նչ կրնանք ընել :

Մարդ մը՝ կնկանը ապսպրած աղա .

մանդեայ ապարանջանը չկրնալով գնել
և կամ գնել չուզելով, կինը հացագոր-
ծին տրուելիք ստակը քանի մը ամիս
վար կը դնէ և այդ ստակով պէ՛սքն հո-
գալէն յետոյ եղելութիւնը էրկանը կի-
մացնէ :

Երիկը շէշին դուռը մարս կ'ըլլայ :

—

16 — 22 Մարտ

Հողմ, ձիւն, անձրև, ձիւն, նորէն
անձրեւ :

Շիտակը ա՛լ ձանձրացանք :

Մէկ վայրկեանը միւսին չի յարմարող
հիւանդ մ'է կարծես այս Մարտ ամիսը :

Մարդ մը վիճակահանութեան առա-
ջին պարգեւը կը շահի :

Աստուած տայ :

Զգուշացէ՛ք երկաթուղւոյ գիծերուն
մօտէն անցուդարձ ընելէ :

—

22—31 Մարտ

Անճրեւը դադրեցաւ տեղալէ . ճիւղին
ալ վերջը եկաւ . օրհնեալ է Աստուած .
Քիչ մ'ալ երկնից կապոյտը և անոր
վրայ փայլող արեւուն ճառագայթները
վայելենք :

Պէտք չէ կարեւորութիւն տալ այս
օրերս մերթ ընդ մերթ փչող հողմոց
որոնք իրենց մունչիւններովը տխուր
ձմեռը մեզ կը յիշեցնեն :

Մսին գինը օրէ օր վրայ կը դնէ .
փոյթ չէ , աղքատն ալ լուբիաին սանը
վրայ կը դնէ :

Նպարավաճառ մը անանկանալով վար-
ժապետ կըլլայ :



Ա Պ Ր Ի Լ

1—7 Ապրիլ

Ախորժեղի օդ :

Զովութիւն մանաւանդ առաւօտ եւ
երեկոյ որմէ հարկ է զգուշանալ տա-
կաւին :

Տօն ստախօսութեան :

Տեսէ՛ք սա ցնդած պառաւը , ա՛լ մարդ
չէ գտեր հետը կատակ ընելու , գացեր
յիսուն գարուններ տեսնող աղջիկը կը
ջանայ խարել . քեզի նշաներ եմ , մօ-
տերս պիտի կարգեմ կ'ըսէ :

Վարժապետ մը բաղդին մէկ յաջող
բերամամբը ասպարեզէն կծիկը դնելուն ,
կ'երթայ խունկ և մօմ նուիրել Չար-
խափանին :

—

8—14 Ապրիլ

Օդը երեսը կախած է , անձրեւ կ'ըս-
պառնայ :

Կծծի մարդ մը 5 դահեկան տուգանք
տալու դատապարտուելով կ'որոշէ 15
օր ծոմ պահել ,

էրիկ մը կնիկէն սաստիկ ծեծ կ'ուտէ
թուռնիւրին հայհոյած ըլլալուն :

Կնիկ մ'ալ էրկընէն կը բաժնուի forսէ
դնելու հրաման չի տալուն համար :

Բժիշկները պարսաւանաց քուէ կու-
տան էրկանը :

15—21 Ապրիլ

Կ'անձրևէ :

Հագուստնիդ մի' թեթևցնէք վերջը

կը գղջաք :

Պառաւ մը կը համոզէ իր որդիքն ու
թոռունքը որ բաց գլխով բացօթեայ
տեղերը շրջին , որպէս զի ապրիլի անձ-
րեւը թրչէ գլուխնին :

Կօշկակար մը բանաստեղծ կ'ըլլայ ,
բանաստեղծ մ'ալ հողագործ :

Բժիշկ մը սիւլիւմէնին թոյն ըլլաւը
մամուն վրայ կը փորձէ :

Գրագիր մը իր չօրպանիին « Ծառայ
եմ , աղաս » չըսելուն համար պաշտօնէն
կ'արձակուի :

—

22—30 Ապրիլ

Ախորժեկի եղանակներ :

Առուտուրները բացուեցան :

Կին մը գլխարկի վրայի շինծու թըռ-
չունը բզբտուած տեսնելով տանը կա-
տուն կը խեղդէ :

Յղի կին մը կատուի ճագ մը գիրկն
առած սիրելուն կէսուրոջմէն խստիւ կը
յանդիմանուի և կը յանձնարարուի մի-
անգամայն արևը մարը մտնելէն անմի-
ջապէս ետքը թաղարի մը մէջ քանի մը
բակլա տնկել :

Հարիւր քսան տարու մարդ մը կեան-
քը կ'ապահովագրէ :

Մ Ա Յ Ի Ս

1—7 Մայիս

Օղը երեսը թթուեցուց :

Որոտման խուլ ձայներ անձրեւ կ'ա-
ւետեն :

Թող գայ բարով :

Գիւղագնացութեան պատճառաւ ա-
մեն տուն կռիւը կ'սկսի :

Կանայք նորաձեւութեան կը պատ-
րաստուին :

Տէրը վերջերնիս բարի ընէ :

Տարիքն առած կին մը ուզելով երի-

տասարդութեաց նման կանաչ խոտերու
մէջ թաւալելով զբօսնուլ մէջքը կը ցաւ-
ցունէ :

8—14 Մայիս

Օդը յստակ է :

Կանայք կէս կանդուն երկայնու թեա՛մք
գլխարկներ կը դնեն . շրջազգեստները
կը կարճնան , հովանոցները կ'երկննան :

Թուռնիւրին մօտան փոփոխութիւն մը
չի կրէր :

Տեսէ՛ք սա խեղճ օրիորդը , քօրսէ-
ով մէջքը այնքան սեղմեր է որ շնչաու-
պառ գետին փռուեր է :

Բժիշկները forսէին չ'են վերագրէր
օրիորդին շունչը կտրելը :

Քանի մը պզտիկ հրդեհներ կը պա-
տահին :

Երկրագործն ուրախ է , քանզի հունձ-
քերը լաւ երևոյթ ունին :

15—20 Մայիս

Օղերուն յստակութիւնը գոհունա-
կութեան արժանի է :

Գինւոյ վաճառական մը կը սնանկանայ .
գինեմուլք այդ վաճառականին բացը գո-
ցելու և վարկը տեղը բերելու համար
հանգանակութիւն մը կը բանան և կը
յաջողին :

Շա՛տ ապրին :

Երիտասարդ մը առանց կանխաւ բը-
ժիշկի դիմելու տուճ ընելուն անդիի աշ-
խարհքը կ'երթայ :

Կանանց կօշիկներուն կրունկները քիչ
մ'ալ կը բարձրանան :

Օղաչու մը իր օղապարիկ գնտովը
վեր կը բարձրանայ , պառաւ մը այս
բանը գէշ նշան կը համարի :

—

21—28—31 Մայիս

Կ'անձրևէ :

Ախորժելի զովութիւն մը :

Մարդ մը կը մեռնի անժառանգ եւ
մեծ հարստութիւն կը թողու :


Էրիկ մը կնիկէն կը բաժնուի գլխարկին
ձեւին չի հաւնելուն համար :

Կնիկ մ'ալ էրիկէն կը զատուի պարել
չգիտնալուն :

Հարուստ մարդ մը ուրիշ հարուստի
մը տուն կերակուրի կը հրաւիրուի :
Կերակուրի ատեն խիստ փոքրիկ ոսկոր
մը կը մնայ հրաւիրողին կոկորդին մէջ,
և մարդը թեթեւ ինչ անհանգիստ կ'ըլ-
լայ :

Բժիշկներ կը կանչուին , ատոնք նոյն
ոսկորը հանելու համար կ'որոշեն մար-
դուն կոկորդը ճեղքել և կը ճեղքեն :

Գուցէ մարդն ազատեր եթէ հացի կե-
ղեւ մը կուլ տար , կ'ըսէ հանգուցելոյն
պառաւ սպասուհին լալով :



Յ Ո Ի Ն Ի Ս

1—5 Յուճիս

Օղբ տաք է :

Շատ ամուսիններու մէջ պաղութիւն
կը տիրէ :

Կնաթողութիւններ կը լսուին :

Քանի մը շնորհքով գողեր օձիքնին
ձեռք կուտան :

Լրագրապետ մը թղթի փարա չի գըտ-
նելուն 1—2 օր թերթին հրատարակու-
թիւնը կը դադրեցունէ :

Ողորմելի՛ վիճակ :

Պաղոց առատութիւն . զգուշացէք
չատ ուտելէ : Կին մը չորս մանչ զաւակ
մէկէն կը ծնի :

—

9—12 Յունիս

Օդին տաքութիւնը կ'աւելնայ :

Կին մը քանի մը գիշեր հանգիստ չի
կրնալ քնանալուն կը յանձնարարէ իր
մեծ աղջկան քարիւղով այրել տան բո-
լոր լուերն ու մկները :

Գիւղագնացութեան հարկը մտատան-
ջութիւն կը պատճառէ շատ մարդոց :

Գարեջրի սակառներուն մէջ խեղդը-

և ողներ կը գտնուին :

Թիթեղագործ մը վարժարանի մը տես-
սուչ կ'ըլլայ :

Զգուշացէք ստամոքսնիդ սա ու նա
բաներով լեցնելէ . ջանացէք որքան կա-
րելի է քիչ ուտել և քիչ խօսիլ :

—

13—19 Յուճիս

Օղին տաքութիւնը հետզհետէ կ'ա-
ւելնայ :

Պարապ բաներու համար բարկանալու
եղանակ չէ, փոյթ չէ՛ եթէ մեծ բաներու
համար բարկացեր էք :

Մարդ մը լողալ չգիտնալուն ոտքէն
քանի մը դդուժ կը կապէ ծովը կը նետ-
ուի :

Կին մ'ալ թուռնիւրովը ծովը կը նետ-
ուի և դդուժի մը պէս ջուրին երեսը կը
մնայ :

—

20—27—30 Յուճիս


Պիտի մարինք տաքէն :

Բարեսիրտ խաթուն մը էրկանը հոգւոյն տանը նկուղը բաց կը հրատարակէ տաքէն մարող մարմրող մարդոց համար :

Երիտասարդ մը ժողովրդեան օրինակելի ընթերցասիրութենէն օգտուիլ ուզելով վիպասանութիւն մը կ'սկսի հրատարակել :

Տէրը յաջողէ :

Հացագործները հացի նկանակներուն մէջ մէյմէկ կտոր չուան դնելնուն համար չուանին գինը վրայ կը դնէ :



Յ Ո Ի Լ Ի Ս

1—4 Յուլիս

Օդին տաքութիւնը միւսնոյնն է :

Եօթանասուն տարու պառաւ մը 25 տարու երիտասարդի մը հետ կը կարգուի :

Մէկ բարձի վրայ ծերանան :

Մանկամարդ կին մը գիշեր ատեն

երկնից աստեղագարդ կամարը զմայլ-
մամբ դիտած աստեղ կեսուրը քովը կը
մօտենայ և հորիզոնին վրայ փայլող
Հուսանին մօտ աստղ մը ցոյց տալով կ'ըսէ .
հարսնո՛ւկ , մօտերս տեղ մը մեծ կրակ
պիտի ըլլայ :

5—11 Յուլիս

Տաք , վերջապէս տաք :

Ծովու բաղնիքները լեփ : լեցուն են ,
տաք բաղնիքներուն երեսը նայող չիկայ :

Սասապահանջ կեսուր մը երեք տա-
րի մունջ կենալու կը դատապարտէ
հարսը , որ իր առջին էրկանը երեսը
նայելու ոճիրը գործած էր :

12—19 Յուլիս

Հեղձուճիչ ջերմութիւն մը :

Գինովները մինչեւ տուն չկրնալով եր-
թալ փողոցներուն մէջ կը պառկին :

Կին մը գինով էրկանը գիշեր աստեղ

բերած ձուկը ձեռքէն առածին պէս
շուներուն առջին կը նետէ :

Ջանացէք որքան կարելի է հոգ տա-
նիլ մաքրութեան :

Կիրք հով մը կնկան մէկուն գլխէն
գլխարկը կը թռցնէ :

—

20—31 Յուլիս

Ջերմութիւնը միւսնոյնն է :

Առուտուրները գոհացուցիչ են :

Հարուստ կծծի մը կը մեռնի . հան-
գուցելոյն եղբայրները թողած դրամը
իրենց մեջ սիրով և միաբանութեամբ
բաժնելով խղճի մտօք կ'ուտեն կը լմըն-
ցընեն :



Օ Գ Ո Ս Տ Ո Ս

1—9 Օգոստոս

Ջերմութիւնը զգալի կերպիւ նուա-
զեցաւ :

Տարբեր հովեր կը փչեն : Ծովու վրայ

գտնուողներուն վիճակը նախանձելի
ըլլալէ հետի է :

Կառախուժք մը գծէն դուրս կ'ելնէ .
բարեբաղդաբար մարդու կորուստ չկայ :

Փորձառու պառաւ մը կը յանձնարա-
րէ իր որդւոց և թոռանց ժանգոտած
գամեր ձգել ջրամբարին ու ջրհորին
մէջ որպէս զի զերծ մնան արեւահարու-
թենէ :

—

10—17 Օգոստոս

Զովու թիւնը կ'սկսի :

Խաղողն ու գինին առատ : Այգեպանք
ուրախ են , ուրախ են նաեւ գինեմուլք :

Տեղ մը երկաթի հարուստ հանք մը
կը գտնուի :

Լրագրապետ մը իր պաշտօնակցաց
հացկերոյթ կուտայ :

Քացախին գինը վրայ կը դնէ :

—

18—25 Օգոստոս

Օգոստոս անձրև կ'սպառնայ :

Քանի մը վաճառականներ կը սնանկանան :

Յիսուսն եւ հինգ տարու կին մը 20 տարեկան երիտասարդի մը հետ կը փախչի :

Մեծատուն մը իւր կնոջ չափազանց ծախուց պատճառաւ սնանկանալու երկուդէն կ'որոշէ տնտեսագիտական դասեր աւանդել անոր :

—

25—31 Օգոստոս

Կ'անձրևէ :

Մլուկներէն , լուերէն եւ մեղուկներէն հանգիստ քուն չի կայ :

Տեսէ՛ք սա խեղճ երիտասարդը , սլորտէն ճաթեր է , գիրնալու յուսով չափէ աւելի գինի խմած ըլլալուն :

Պառաւ մը յաջողելով յիսուսն եւ հինգ տարու աղջիկը իր ուզած երիտասարդին հետ կարգել , ուրախութենէն խելքը կը թռցունէ :

Ս Ե Պ Տ Ե Մ Բ Ե Ր

1—8 Սեպտեմբեր

Անճրեւարքեր հողմուկնք :

Բժիշկ մը շէնք շնորհք ծեծ կ'ուտէ
նուազ այցելագնով աղքատ հիւանդի մը
այցելել չուզելուն : Անոյշներ'ր ըլլայ :
Հարուստ վաճառական մը տանը պար-
տիզին : մէջ հիանալի գեղեցկութեամբ
աւագան մը շինել կուտայ . տարեգըլ-
խուն հաշուեկշռին մէջ բաւական մեծ-
կակ բաց մը տեսնելուն՝ կորոշէ այդ
բացը գոցելու համար պարտիզին սու-
զանը փակել քարով ու հողով :

Այս տեսակ բաց մը գոցելու համար
ասկէ ուրիշ միջոց չիկայ :

—

9—16 Սեպտեմբեր

Հողմային պարզութիւն :

Ածխավաճառները մեծ փութով ի-
րենց մթերանոցները կը լեցնեն : Բը-
ժիշկները մաշուած գրպաննին կը նո-

րողեն : Կնիկներն ալ աշնան նորածե-
ւութեան կը պատրաստուին :

Առուտուրները բացուեցան , ծախ-
քերն ալ շատցան . ի՛նչ հասկցանք աս-
կէ . վերջապէս հաստ ու բարակ մէկ
գին է :

—
16—23 Սեպտեմբեր

Հարաւային ու հիւսիսային հողմունք
յաջորդաբար կը փչեն :

Կանայք ձկնորսութեան կ'ելնեն : Կա-
նանց համար ձկնորսութիւնը նորածե-
ւութեան կարգը կ'անցնի կամաց կամաց :

Հարբուխը կ'սկսի , ամեն մարդ կը
հազայ . կին մը մինչեւ լոյս հազէն չի
կրնալ քնանալուն , հետեւեալ առտուն
ծով բերնով երկու շիշ օղի կը ճնկէ :

—
23—30 Սեպտեմբեր

Մերթ անձրև , մերթ արեւ :

Մարդ մը դիւղագնացութեան առ-

Թիւ արտաքոյ կարգի ծախուց դրամ չի
կրնալ օգտեցնելուն՝ կը հարկադրի ճը-
մեռուան տունը սուղ աժան ծախել :

Մարդ մ'ալ գիւղէն կ'ուզէ վար իջ-
նել , սակայն հացագործը , նպարավա-
ճառը եւ մսավաճառը դիմաւորելով
կ'արգիլեն կահ կարասեաց փոխադրու-
թիւնը :

Հ Ո Կ Տ Ե Մ Բ Ե Ր

1—8 Հոկտեմբեր

Խառնակ օդ :

Խառնակ լուրեր :

Հարուստ մը բարեգործական ընկե-
րութեան մը դրամական աննշան նուէր
մը կ'ընէ . լրագիրք այդ մարդը յերկրէ
յերկինս կը բարձրացնեն գովելով :

Ասդին աղքատիկ մարդ մը բարենը-
պատակ ձեռնարկութեան մը այդ հա-
րուստին տուածին քառապատիկը կու-
տայ , ոչ ոք կ'իմանայ այս բանը և ոչ

մէկ լրագիր այս մասին տող մը բան
կը գրէ :

Գիւղագնացութեան առթիւ սնանկա-
ցողներ կը գտնուին :

—

9—16 Հոկտեմբեր

Օգը միշտ խառնակ է :

Երկրագործք գոհ են . ածխավաճառք
գոհ ըլլալ կ'երազեն :

Հարսանեաց օրեր . կարգուող չըլլա-
լին ետքը . . . : Թրաքօման վերցնել
կ'ուզեն , լա՛ւ . այն ատեն մեծ ու տը-
գեղ աղջիկներն ի՞նչ ընեն . Թրաքօման
է որ տգեղը կ'աղւորցնէ մեծը կը պըզ-
տիկցնէ :

Պէտք չէ ուրեմն նզովել քրախօման
որում շնորհապարտ մնացողներ շատ կան
արդարեւ :

—

17—23 Հոկտեմբեր

Անճրեւաբեր հողմունք .

Թեթեւ հիւանդութիւններ տեղի
կ'ուենեան :

Պէտք չէ հաւատ ընծայել բժշկաց ո-
մանց խօսքին , որք լուսն ուղտի չափ
խոշոր կ'ուզեն ցուցնել :

Զգուշացէ՛ք թեթեւ հագուստներով
բացօթեայ տեղեր շրջելէ , գիտէք ար-
դէն աշնան հետ կատակ ընողը կը զըղ-
ջայ :

Հարուստ կարծուած մարդ մը կը մեռ-
նի և հակառակ ժառանգորդաց) ակըն-
կալութեան կուտ մ'անգամ չ'ելներ սըն-
տուկէն :

—

23—31 Հոկտեմբեր


Հողմ և անձրեւ .

Թատրոններու դռները բացուեցան ,
կուռոյ դռներն ալ մէկտեղ բացուեցան
չատ տուներու մէջ :

Տէսէ՛ք սա խեղճ մարդը , դուրսը անձ-
րեւին տակը մնացեր է , կինը չ'ուզեր
դուռը բանալ էրիկը զինքը թատրոն չը

տանելուն համար :

Ապահովական ընկերութիւն մը կը սը-
նանկանայ :



Ն Ո Յ Ե Մ Բ Ե Ր

1—7 Նոյեմբեր

Անձրեւը կը շարունակէ :

Կին մը էրիկը կը բարկացնէ . էրիկն
ալ վրէժը լուծելու համար գիշերը կըն-
կան գլխուն մազերը կը կտրէ :

Կինն ալ քանի մը օրէն ետքը էրկանը
պելսերը կածիլէ :

8—16 Նոյեմբեր

Այս անձրեւին ա՛լ վերջը չեկաւ :

Սիրտհար երիտասարդ մը վերջապէս
ճարահատեալ իր սիրուհւոյն հայրը լաւ
մը կը դրոշմէ :

Հայրը անոր վրայ կը հաւանի աղջիկն
այդ երիտասարդին կնութեան տալ գո-
հացուցիչ պայմաններով :

Գէշ առուտուր չէ այս :

Շուկայն առուտուր չկայ, խանութ-
պանները մինչև երեկոյ նարդ, թուղթ
են. խաղալով ժամանակ կ'անցնեն, ի-
րիկուններն ալ սրտնեղութիւննին օղի
ճնկելով կ'անցնեն :

16—21 Նոյեմբեր

Անճրեւը դադրեցաւ . Փա'աք Աս-
տուծոյ :

Ծառերը կմախք դարձան, ցուրտն
սկսաւ զգալի ըլլալ բայց ոչ ածխավա-
ճառները գոհ ընելու աստիճան :


Մսավաճառներուն մօտ երթալու հա-
մար հարկ է կալուածագիր մը ի ձեռին
ունենալ :

21—31 Նոյեմբեր

Մերթ անճրեւ, մերթ Արեւ :

Մարդ մը կնկանը աչքը վախցնելու
համար կատու մը կը խեղդէ . կինն ալ
էրիկը սարսափեցնելու համար քթին

բերնին ապտակ մը կը զարնէ և մէջքին
կից մ'ալ տալով գետին կը փռէ :



Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր

1—6 Դեկտեմբեր

Հողմ և անձրեւ :

Կծծի մարդ մը պահած բոլոր դրամը
կը գողցնէ .

Ուրիշ կծծի մ'ալ սովամահ կը կորնչի :

Հարուստի մը կինը էրկանը մեռնե-
լէն ետքը տանը խոհարարին հետ կը
կարգուի :

Լրագրապետ մը ծանր տուգանաց կը
դատապարտուի :



7—14 Դեկտեմբեր

Անձրեւ և ձիւն :

Փոխառութեան զրոյցք կը լսուին :

Նաւապետ մը նաւը ցամաքին վրայ
քալեցնելու փորձ կը փորձէ :

Եթէ յաջողի՝ աղէկ բան :



14—21 Եկեղեցիքեր

Ձիւնախառն անձրեւ :

Ցուրար տժգոհութիւն չի պատճառեր :

Ահագին քանակութեամբ բուդրա կ'ապառի :

Քօրսէի զոհեր կը գտնուին :

22—31 Դեկտեմբեր

Մերթ ձիւն և մերթ տնձրեւ :

Մեծ և փոքր վաճառականք գլուխ քերելու ժամանակ չ'ունին, հաշուեկը շիւնին կը պատրաստեն :

Աստուած չամչցնէ :

Մեծ քանակութեամբ մրգեղէն կ'ըսպառուի :

Հարուստ մը իւր անձնական քսակէն աղքատիկ տղայոց մէյմէկ ձեռք հագուստ կը շինէ :

Շատ ապրին ասանկ ողորմած հարուստները :

Մնաք բտրեա՛լ :

Տեսնուինք կրկին 1891 ին :

1

2

3

4

5

6

7

8

9

10

11

12

13

14

15

16

17

18

19

20

21

22

23

24

Վ Ի Ճ Ա Կ Ա Ց Ո Յ Ց

1

Եթէ կրնաս բնա՛ւ օղի մի խմեր, ե-
թէ չես ուզեր տունդ դեղի շիշերով
լցուած տեսնել: Քալելը քեզի շատ օգ-
տակար ըլլալուն՝ քուէն, քրանվէյ մի,
նասիր: Օղը ցուրտ եղած օրերը կրնաս
առատուն կանուխ ճամբայ ելած խոշոր-
կէկ գաւաթ մը օղի ճնկել, գաւաթ
մ՛ալ երեկոյին շուկայէն ի տուն վերա-
դարձիդ ասկէ աւելին վասա է:

2

Դժբաղդուծիւն մ՛անցուցիր, բայց
մոռցար հատուցում մ՛ընել բարեկամիդ
որուն սովբեցուցած խելքին շնորհիւ
կրցար պէլան գլխէդ սէճ ընել: Զգու-
շացի՛ր կրկին մօրուք թող տալէ, ապա
թէ ոչ մինչեւ կենացդ վերջին օրը մօ-

րուքդ շնորհաւորելու համար եկող գա-
ցող պիտի ըլլայ տունդ :

3

Մանր մունր պարտքերդ վճարելու
փոյթ ունեցիր , խոշոր պարտքերուդ
համար թող որ պարտապահանջներդ
մտմտան քու տեղդ , ինչպէս արդէն
սկսած են մտմտալ :

Բարեկամ մ' ունիս , բարեւ մը տալուդ
կ' ապասէ որ՝ չոլուխովը չօնուխովը գայ
մէկ երկու ամիս մինտերը տունդ փռէ
խբրեւ հիւր :

4

Հազար հինգ հարիւր ոսկի քրաֆումա-
յով աղջիկ մ' առնելու դիտաւորութե-
նէդ ետ կեցիր , քանզի արդէն տարիքդ
առեր ես . ասկից վատ դրամագլուխդ
գէթ պահանջած դրամիդ մէկ չորրոր-
դին չափ ըլլայ . . . ի՛նչ հարկ բաճրեղէն
թռչիւք , եկո՛ւր խօսք մտիկ ըրէ սիրե-

լիս, առ քեզի տարեկից կին մը, ո
թօալէթի ժամանակն վաղուց անցուցածը
ըլլալուն քեզի մասրաֆի դռներ ալ չի
բանար :

5

Ստոյգ է որ քեզի համար լծակից մը
դտած ես, բայց ստէպ անոր թուրնիւ-
րին, forսէին, գլխարկին և ուրիշ չեմ
գիտեր ինչին բան ըսելուդ միտքը դը-
րած է մօտերս որ մը խոզ աշաղրն
կանչել :

Եթէ այսօրուան օրս նիւթականդ
քիչ թէ շատ կարգին դրած ես, չես
կրնար ուրանալ թէ կնոջդ շնորհիւ է .
քանի որ այս այսպէս է հարկ է միշտ և
հանապազ կնոջդ բան մը չըսել և մէկ
խօսքն երկու շընել մինչեւ անանկանա-
լըդ :

6

Շատ կծծի ես, անանկ որ քեզի տես-

նողը մուրացկան մը կը կարծէ և կը պատրաստուի ձեռքդ տասնոց մը դընելու : Կաւ գործ մը ըրած կ'ըլլաս , եթէ պահած դրամդ սըվոր նըվոր և կամ ինծի տաս ու տուն մուրացկանութեան ելնես , թերեւս այն ատեն վրադ արգահատողներ գտնուին . ընդհակառակն հիմայ այդ վիճակիդ մէջ ծաղրելի ես ամենուն :

7

Շիտակը ներկայիդ խօսք չիկայ , բայց ապագայդ քիչ մը մութի մէջ է : 25000 ռակի դրամօժիտով աղջիկ մը պիտի առնես , տարի մը երկու հանգիստ ժամանակ անցնելէդ յետոյ՝ կինդ հօրը առնը պիտի դրկես որ քեզի նորէն ստակ բերէ . աներդ աղջկանը սիրոյն չէ չպիտի ըսէ . դուն այն փարաները պիտի հատցունես շռայլութեամբ եւ կամ գործդ չգիտնալուդ , և միւս անգամ կինդ աներոջդ պիտի դրկես . աներդ ալ

այս երկրորդ անգամ չէ թէ միայն ըս-
տակ չպիտի դրկէ, այլ և կինդ ալ վար
պիտի դնէ :

8

Քեզի բարեւ տուողը բարեկամ կը
կարծես և սրտով անոր կը փակիս . խել-
քըդ գլուխդ ժողվէ և հեռացուր քո-
վէդ այդ հացկատակները, որք անկու-
մըդ փութացնելու համար միայն քեզի
բարեկամ եղած են . ի՞նչ ըսել է ամեն
օր պտտելու երթալ, մեծածախ երե-
կոյթներ տալ, թատրոններու և պա-
րահանդէսներու ներկայ գտնուիլ :

Սարտեաչ մազերով կին մը մտադիր
է իւր աղջիկը քեզի կնութեան տալ
1000 ոսկի դրամ օժիտով եթէ խելքդ
գլուխդ ժողվես և գործդ գիտնաս :

9

Կը գանգատիս թէ՛ կինդ քեզի մար-
դու տեղ չի դնէր, բայց դուն ալ չես

մտածեր խելքդ գլուխդ ժողվել. վաս-
տը՝ ամ ստակիդ կէսէն աւելին գինե-
պանին ասիւր կը լեցնես. գիշերները գի-
նետունէն մինչեւ չի վռնտուիս տուն
չես երթար, ո՞ր մէկը ըսեմ, կ'ոջդ և
զաւակացդ վրայ հոգ չես տանիր:

Բաղդը քեզի պիտի ժպտի, վիճակա-
հանութեան մը առաջին պարգեւը պի-
տի շահիս, եթէ դադրիս այդ գար-
շելի վիճակդ շարունակելէ:

10

Կարողութենէդ տանապատիկ վեր
գործերու մէջ մտնել կ'ուզես, լաւ բան
չէ այդ. հարկ է ամեն գործ խոհեմու-
թեամբ գործել և միշտ վախճանը մը-
տածել:

Մօտերս տեղ մը ճամբորդութիւն պի-
տի ընես, բաւական արդիւնաւոր պի-
տի ըլլայ քեզի այդ ճամբորդութիւնը:
Գոհ եղիր վիճա կէդ, բարեյաջող է ա-
պագայդ:

Կանանց բուռնացին, քորսէին թուր-
նիւրին բան ըսելուդ համար մէկը քեզի
աղջիկ չպիտի տայ, արդէն պարել չը
գիտնալդ ալ կանանց ուշադրութեան
առարկայն եղած է:

Բաղդը քեզի պիտի ժպտի, եթէ
դադրիս կանացի այդ տեսակ զարդուց
հակառակելէ և ջանադիր լինիս պարել
սովրելու:

Դուն մօտերս պիտի նշանուիս, և պի-
տի կարգուիս. կինդ քեզ պիտի սիրէ
սրտովին և դուն զանի փոխադարձա-
բար. խաղաղ օրեր պիտի անցունէք
չատ. սակայն ապագային ձեր խաղաղու-
թիւնը խանգարող դէպք մը պիտի պա-
տահի, այն ալ՝ կնոջդ համար թաւշեայ
գեղեցիկ գլխարկ մը գնելդ պիտի ըլլայ,
որ պիտի վառէ ու բորբոքէ պառաւ
զոքանչիդ նախանձը:

Ծանր հետեւանաց տեղի չտալու հա-
մար փութալու ես նմանօրինակ գլխարկ
մ'ալ գնել և թողութիւն խնդրելով զո-
քանչիդ գլուխն անցունել, « ի՛նչ ալ
աղւոր վայլեց » ըսելով:

13

Դու ո՛վ մարդ , պիտի կարգուիս ,
արդա՛րեւ բարի և առաքինի աղջկան
մը հետ . բայց ցաւ է ըսել թէ՛ կար-
գուելովդ պէլան գլուխդ ծախու ա-
ռած պիտի ըլլաս , ոչ թէ կնոջդ պատ-
ճառաւ , այլ անոր կեսուրոջը երեսէն . .

Կեսուրը՝ ըստ նահապետական սովո-
րութեան՝ մինչեւ եօթը տարի հարսին
խօսելու հրաման չպիտի տայ , և ոչ իսկ
իր առջին քու երեսդ նայելու . հարսը
չպիտի մտիկ ընէ , կեսուրը պիտի պըն-
դէ վերջապէս կռիւն է պիտի սկսի :

14

Ով մարդ , բաղդին բարեյաջող բեր-

մամբը արդարեւ կարեւոր պաշտօնի մը վրայ ես, սակայն քեզ բարեկամ ճանչցուած հացկատակները քու անկումդ կը փութացնեն և ալ պիտի յաջողին. բայց բնաւ հոգ մի՛ ըներ, քիչ մը ժամանակ պարապ մտալէդ վերջ հեռաւոր տեղէ մը պաշտօնի պիտի կոչուիս: Երկու սարիէն վերադառնալով աղքատիկ այլ առաքինի աղջկան մը հետ պիտի ամուսնանաս և երկու սիրուն մանչ զաւակներ պիտի ունենաս:

Բազդդ միշտ յաջող է և կը խոստանայ քեզ փայլուն ապագայ մը, եթէ կարենաս այժմեան առիթէն օգուտ քաղել:

15

Շատախօսութիւնդ շատ անգամ տեղի կուտայ պարաւ մօրդ որ հարսին դէմ դրօշակ պարգէ:

Չանա՛ խոհեմութեամբ տանդ մէջ տիրող խռովութեան առաջքն առնուլ:

հակառակ պարագային զսքանչդ մօլդ
և քեզի դէմ դրօշակ պիտի պարզէ որ
արդէն պարզուածին վրայ շուք պիտի
տարածէ :

116

Շատ ծոյլ ես , աշխատիլ բնաւ չես
սիրեր , խանութդ երեսի վրայ , դրեթէ
ամեն օր գոց :

Միտքդ 50000 ոսկի դրամօժիտով
աղջիկ մը առնուլ և հարստանալ է .
պինդ մ'աճապարեր սիրելիս , վասն զի
ամեն մարդ ոչ իր զաւակը եապանը
գտեր է , և ոչ ալ ոսկին գետնէն է
ժողովեր :

117

Դուն պիտի կարգուիս և երեսուն և
չորս հատ զաւակ պիտի ունենաս , ե-
րեսունը աղջիկ և չորսը՝ մանչ : Աղջիկ-
ներդ առանց դժուարութեան իրարու
ետելէ պիտի կարգես շնորհքով մարդոց

հակառակ պարագային զսքանչդ մօլդ
և քեզի դէմ դրօշակ պիտի պարզէ որ
արդէն պարզուածին վրայ շուք պիտի
տարածէ :

116

Շատ ծոյլ ես, աշխատիլ բնաւ չես
սիրեր, խանութդ երեսի վրայ, դրեթէ
ամեն օր գոց :

Միտքդ 50000 ոսկի դրամօժիտով
աղջիկ մը առնուլ և հարստանալ է .
պինդ մ'աճապարեր սիրելիս, վասն զի
ամեն մարդ ոչ իր զաւակը եսպանը
գտեր է, և ոչ ալ ոսկին գետնէն է
ժողովեր :

117

Դուն պիտի կարգուիս և երեսուն և
չորս հատ զաւակ պիտի ունենաս, ե-
րեսունը աղջիկ և չորսը՝ մանչ : Աղջիկ-
ներդ առանց դժուարութեան իրարու
ետեւէ պիտի կարգես շնորհքով մարդոց

հետ առանց քրաքումայի : Սակայն ման-
չերուդ համար՝ հակառակ իրենց արժա-
նեացը ստակով աղջիկ չպիտի կրնաս
գտնել, աղջիկներդ առանց թրաքումա-
յի կարգած ըլլալուդ պատճառաւ :

18

Իրաւ է որ դուն աղքատ ես, բայց
մտերս չյուսացած մէկ տեղէդ ձեռքդ
բաւական մեծկակ գումար մը պիտի
անցնի և դուն այն գումարով պիտի
հարստանաս :

Սակայն ցաւ է ըսել որ՝ քիչ ժամա-
նակի մէջ ամբողջ հարստութիւնդ պի-
տի փճացնես, եթէ քանի մը շահախարն-
դիր մարդոց խօսքին հետեւելով խելքդ
չհասած դորձերու մէջ մտնես :

19

Զոքանչիդ երեսէն քաշածներուդ հա-
մար յուսահատութիւն եկեր է վրադ •
բայց յանցանքը քուկդ է որ չես կըր-

ցեր ժամանակին անոր սիրտը շահիւլ՝
համբերէ՛ վերջոյ բարի է :

Չորս զաւակ պիտի ունենաս , չորսն ալ
աղջիկ , և առանց թրաքօմայի զանոնք
պիտի յաջողիս կարգել եթէ մէջքերնին
քօրսէով սեղմելու չվարժեցնես :

20

Ժամանակէ մը ի վեր գործոյ խան-
գարեալ լինելուն տխուր ես , բայց տըխ-
րութիւնդ շուտով ուրախութեան պի-
տի փոխուի ժառանգելով մէկ միլիոն
Ֆրանքի գումար մը , զոր եղբայրներէդ
մին պիտի թողու քեզ իր մեռնելէն
վերջը :

Պարտ է արդիւնաւորել գիտնալ այդ
գումարը զոր լուսահոգին կեանքը ծախ-
սելով շահած է առանց կարենալ վայե-
լելու զայն միմիայն իւր ազահութեան
պատճառաւ :

Բարեկամի դիմակով հացկատակներ
պիտի մերձենան քովդ , զգուշացիր յի-

մարտարար անանց ծագակն իյնալէ :

21

Շատ հպարտ ես , առանց սակայն դու
խակ գիտնալու պատճառը ում շատեր
ուզած են վերահասու լինել . դրամա-
գրու խղ կատուի մը բնու հազիւ թէ
կըլլայ . առանց երեք ժամ կանխաւ մը-
տածելու երկու խօսք իրարու վրայ չես
կարող ընել , զո՞րն ասեմ , բարձր պաշ-
տօններ կուզես ստանձնել առանց ի
նկատի առնելու ապիկարու թիւնդ . . .
Լա՛ւ կընես եթէ վերամակիդ չափովը եր-
կընցնես ոտքերդ :

Եթէ խելքդ գլուխդ ժողվես և ար-
ժանեացդ համեմատ վարմունք մ'ունե-
նաս՝ բողդդ պիտի ժպտի քեզի :

22

Կ'երեւի թէ մի քիչ յիմարու թիւն
ունիս ինչու որ շիտակ ճամբու վրայ քա-
լել ճկատես , լարախաղացու թիւն կընես :

Մօտերս բարեկամներէդ մին քեզի
 գործ մը պիտի յանձնարարէ , եթէ այդ
 յանձնարարութիւնը գոհացուցիչ կեր-
 պով կարող լինիս կատարել ապագայդ
 մասամբ ապահոված պիտի ըլլաս :

23

Եթէ քեզ նման միամիտ մարդ մ'ալ
 գտնել հարկ ըլլայ , ուրիշ տիեզերքի մը
 մէջ երթալ փնտռելու է :

Սեւ մը սատանորդիներ , մօրը մանա-
 ծը ծախող մարդեր շորս կողմդ առած
 գիշեր ցորեկ կը շոյեն և կը շողոքօրթեն
 մինչեւ չուլ պապան հանեն քեզի :

Ճերմակ մազերով սև յօնքերով մարդ
 մը որ քեզ բարեկամ է՝ արգահատելով
 վրադ կը ջանայ այդ մարդոց թակարթն
 իյնալու փտանդէն ազատել քեզի :

24


Դու հաստատամիտ մարդ մը չես , որ

նոր կարծիք նոր կը փոխես , սկզբունք
երբէք չունիս , այսօրուան պաշտպա-
նածղ վաղը կը հալածես , վաղուան հա-
լածածղ միւս օր կը գովես . աչքի վար-
նող մեծ թերութիւն մ'է այս , որուն
համար շատ անգամ տուժած ես և տա-
կաւին մեծ վնասներ պիտի կրես :

Գործի մը պատճառաւ բարեկամի մը
հետ ծովային ճամբորդութիւն մը պի-
տի ընես , եթէ հաստատամտաբար ա-
մեն դժուարութեանց կարողանաս դէմ
դնել բաւական մեծ օգուտ պիտի քա-
ղես անկէ :



İBB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi



ERM1393

255.07.02.01.06.00/

معارف نظارت جلیله سنک و خصتیه طبع اولمشدر

Գին 1 դահեկան